Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 18

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29.06.2023թ. ժ. 11:00 Էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

Խորհրդի անդամներ

1.	Աշոտ Ոսկանյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
2.	Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
3.	Գուրգեն Գրիգորյան	«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
4.	Սարգիս Ասատրյանց	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
5.	Հայկազ Ֆանյան	«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
6.	Էլինա Մարգարյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
7.	Գագիկ Գյուլբուդաղյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
8.	Կարեն Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

Քարտուղարության անդամներ

9.	Լիլիթ Հակոբյան	Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետ
10.	Հռիփսիմե Հովհաննիսյան	Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետություն–մասնավոր երկխոսության բաժնի պետ

11.	Հովսեփ Պատվականյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար
12.	Հայկ Մալխասյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու
13.	Դավիթ Աղաջանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
14.	Ռուբեն Սարուխանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի տնտեսագետ, տնտեսագետ
15.	Վիկտորիա Կամարյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող
16.	Վահե Մխիթարյան	Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետություն–մասնավոր երկխոսության բաժնի ավագ մասնագետ
17.	Եկատերինա Խաչատրյան	Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Հրավիրված անձինք

18.	Լուսինե Սարգսյան	Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի դեսպանություն
19.	Սամվել Խարազյան	Առողջապահության նախարարի խորհրդական
20.	Շուշանիկ Ղուկասյան	ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի իրավաբան փորձագետ
21.	Արտակ Մանուկյան	Կենտրոնական բանկի խորհրդի անդամ
22.	Էմիլ Մարգարյան	Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ

23.	Լեոնիկ Հարությունյան	Պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ
24.	Արթուր Ալեքսանյան	Ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի պետ
25.	Աննա Անանիկյան	Ֆինանսների նախարարության գլխավոր մասնագետ

Նիստի բացմանը, մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը, ողջույնի խոսքով հանդես եկավ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. Առողջապահության պարտադիր ապահովագրության փաթեթի վերաբերյալ խնդիրների և առաջարկների քննարկում: ***(02.06.2023թ. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ենթախորհրդի նիստում հետաձգված հարց)***

Առողջապահության նախարարի խորհրդական Սամվել Խարազյանը ներկայացրեց Առողջապահության պարտադիր ապահովագրության ընտրված մոդելի ընտրության, դրա հետ կապված հիմնական առարկությունների հետ կապված որոշակի պարզաբանումներ, մասնավորապես Հայաստանի համար, որպես լավագույն մոդել ներկայացվող, ապահովագրության համակարգի կառավարման մոդելի հետ կապված: Պարոն Խարազյանը ներկայացրեց, որ ընդհանրապես միջազգային պրակտիկայում գոյություն է ունեցել առողջապահության ապահովագրության երեք մոդել

1. պետական կամ բյուջետային ֆինանսավորման մոդել, որի դեպքում վճարում է պետությունը,
2. «Բիսմարկյան» մոդել, որը կառուցված է առողջապահության պարտադիր ապահովագրության միասնական հիմնադրամի շուրջ,
3. Պետություն–մասնավոր մոդել, որը կառուցված է առողջության պարտադիր ապահովագրության բազմաթիվ հիմնադրամների կամ ընկերությունների շուրջ:

Սակայն 1990–ականից սկսած գործում են խառը ֆինանսավորման մոդելները և դրանց զուգակցումը բերել է ազգային առողջապահական ապահովագրական մոդելների ձևավորմանը, որոնք շատ զարգացած են Կանադայում, Հարավային Կորեայում, Ֆրանսիայում, հարավ–արևելյան, մերձբալթյան և այլ երկրներում, այսինքն՝ տարբեր զարգացած և զարգացող երկրներում:

Հաշվի առնելով այդ բնագավառում տարբեր երկրների փորձը, Հայաստանյան մոդելի ընտրության հարցում Առողջապահության նախարարությունը առաջնորդվել է մի շարք

չափանիշներով՝ բնակչության թվաքանակը, գոյություն ունեցող ինստիտուցիոնալ և երկրի եկամուտների գեներացման կարողությունները և այլն:

Համաձայն պարոն Խարազյանի, «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, Հայաստանում կգործեն առողջության ապահովագրության երկու տեսակ՝ համապարփակ և կամավոր ապահովագրություն: Այսօր Հայաստանում արդեն իսկ գործում է կամավոր բժշկական ապահովագրություն, սակայն բնակչության մոտ 2%-ից պակասն են օգտվում դրանից, իսկ այս մեխանիզմի միջոցով իրականացված առողջապահական ծախսերը կազմում են ընդհանուր առողջապահական ծախսերի միայն 1.2%-ը: Հայաստանում առողջապահական ծախսերի գերակշիռ մասը բնակչությունը հոգում է սեփական միջոցների հաշվին՝ գրպանից, ինչի պատճառով շատ հիվանդությունների դեպքում բժիշկներին դիմում են այդ հիվանդությունների բարդ փուլերում: Բացի բնակչության մի ստվար զանգվածի համար հասանելի չեն մի շարք բժշկական ծառայություններ և առողջության պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման շնորհիվ բնակչության բոլոր խմբերը կունենան բժշկական հիմնական ծառայությունների ֆինանսական հասանելիություն, իսկ կամավոր ապահովագրություն-ը կլրացնի առաջարկվող համապարփակ ապահովագրության համակարգին:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

«Ամերիկայի Առևտրի պալատը Հայաստանում» կազմակերպության ղեկավար Էլինա Մարգարյանը՝ «Ֆինարմ» կազմակերպության գործադիր տնօրեն Կարեն Զաքարյանի համազեկուցմամբ ներկայացրեց հարցի հետ կապված և նախկինում արդեն իսկ բարձրաձայնված՝ մասնավոր հատվածի դիտարկումները, մասնավորապես կապված առողջության պարտադիր ապահովագրությունն իրականացման հետ: Վերջինս նշեց, որ Նախագիծն ամբողջությամբ անտեսում է մասնավոր ապահովագրական շուկայի միջոցով առողջության պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հնարավորությունը՝ չնայած ԱՊՊԱ համակարգի ներդրման հաջողված փորձին, այդ ընկերություններում մասնագիտական մեծ պոտենցիալի առկայությանը և անկախ վերահսկողության մեխանիզմների առկայությանը: Նախագծով առաջարկվող մեխանիզմը ոչ միայն չի նպաստելու մասնավոր ապահովագրական շուկայի զարգացմանը, այլ նվազեցնելու է առողջապահական պոլիսների գնման ծավալները: Բացի այդ, համաձայն զեկուցողների՝

- մասնավոր ընկերությունները դուրս են մնում առողջության ապահովագրության շուկայից, այս առումով առավել արդյունավետ է կիրառել ԱՊՊԱ համակարգի մոդելը, ինչը պետական-մասնավոր արդյունավետ համագործակցության կայացած օրինակ է:
- ԱՀԱ միջոցների հավաքագրումը, վճարների չափերի սահմանումն ու ծախսումն իրականացվելու է մեկ մարմնի՝ Հիմնադրամի կողմից, որի կառավարման խորհրդի նախագահն ի պաշտոնե ՀՀ առողջապահության նախարարն է: Այսինքն, փաստացի մեկ մարմնի ներքո է կենտրոնանալու քաղաքականությունը և բոլոր գործառույթների իրականացումը: Դա էլ ավելի է խորացնում կոռուպցիոն ռիսկերը, հատկապես հաշվի

առնելով շահերի բախումը: Անգամ Հիմնադրամի գործունեության մասին հաշվետվությունների ձևերը սահմանվելու են նույն կառավարման խորհրդի կողմից:

- Հայեցակարգով փաստացի անտեսվում է ապահովագրվող անձի ընտրության իրավունքը՝ լիցենզավորված բուժհաստատություն ընտրելու հնարավորությունը, առանց վերջիններիս վրա կիրառվող սահմանափակումների:
- Ինստիտուցիոնալ առումով առաջարկվում է կիրառել ԱՊՊԱ համակարգի մոդելը, ինչը պետական-մասնավոր արդյունավետ համագործակցության կայացած օրինակ է:
- Չի կարող վերահսկվել կոռուպցիայի դրսևորումների հետ կապված դեպքերը և այլն:

Պարոն Զաքարյանը առաջարկեց հիմնադրամի կառավարման մարմինը ձևավորել գործող ԱՊՊԱ–ի մոդելով, այսինքն՝ որոշումների կայացումը իրականացնել անդամների ընդհանուր ժողովների գումարման միջոցով:

Հարցի վերաբերյալ քննարկման ընթացքում իրենց դիտարկումները հայտնեցին ՓՄՁ ենթախորհրդի ներկա անդամները և դրանք հիմնականում վերաբերում էին Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի ստեղծման և կառավարման, որակի և արդյունավետության խնդիրներին:

Մասնավորապես, սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոնի ղեկավար Հայկազ Ֆանյանը հայտնեց, որ համաձայն դիտարկվող փաթեթի՝ փոխհատուցման համար կիրառվելու են ԱՆ կողմից հաստատված նոր մեթոդաբանության հիման վրա հաշվարկված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գները, այսինքն՝ պետությունը կարգավորելու է առողջապահական ծառայությունների գները:Այդ հանգամանքում չի բացառում, որ կառաջանա ստվերային վճարների ինստիտուտ, այսինքն, մարդիկ ստիպված են լինելու հավելյալ վճարումներ անել: Բացի այս, երբ պետությունը կարգավորի շուկայական գները, այս ոլորտում շահութաբերության մարժան ընկնելու է, մասնավոր հիվանդանոցները ներդրումներ են անում, նոր սարքավորումներ են գնում, և եթե շահութաբերության մարժան ընկնի, դա ազդելու է նրանց ծառայությունների արդիականացման վրա:

Ամփոփելով ներկայացվածը, Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը ներկայացրեց իր պարզաբանումներն ու դիտարկումները Առողջապահության պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման և հետագա գործընթացների կառավարման հետ ՓՄՁ ենթախորհրդի անդամների առաջարկությունների հետ կապված: Մասնավորապես, պարոն Գևորգյանը ներկայացրեց պարզաբանող փաստարկներ՝ ԱՊՊԱ համակարգի կառավարման Բյուրոյի և նախագծով նախատեսվող հիմնադրամի գործառույթների և իրավասությունների տարբերություններով պայմանավորված՝ կառավարման տարբեր մոդելներ կիրառելու անհրաժեշտության վերաբերյալ:

Միաժամանակ պարոն Գևորգյանը նշեց, որ նիստի ընթացքում քննարկված հարցերին և խնդիրներին պետք է նայել ավելի լայն, քան փաթեթի դետալային քննարկման տեսանկյունից: Քննարկվող նախագիծը ընդամենը մեկ բաղադրիչն է առողջապահության ամբողջ համակարգի բարեփոխմանը ուղղված քաղաքականության համատեքստում: Բացի

այդ, դրանով չի նախատեսվում ստեղծել որևէ նոր մարմին, որի իրավասության շրջանակը ներառելու է բժիշկների կողմից մատուցած ծառայությունների և որակի, բժշկական պրոտոկոլի և առողջապահական այնպիսի գործընթացների կառավարում, որոնք ենթադրում են քաղաքականության վարում, քանի որ դրանք գտնվում են Առողջապահության նախարարության գործառույթների տիրույթում: Պարոն Գևորգյանը նաև նշեց, որ Առողջապահության ոլորտը կարիք ունի բազմաթիվ բարեփոխումների՝ ներառյալ նոր ենթակառուցվածքների, գիտական, նորարարական մոտեցումների, տեխնոլոգիաների ներդրման, կրթական և առողջապահական համակարգերի բարելավման ուղղությամբ:

ՈՐՈՇՎԵՑ

Նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանի առաջարկությամբ որոշվեց՝ ենթախորհրդի անդամներին ներկայացնել հստակ առաջարկություններ հիմնադրամի կառավարման մեխանիզմների, այդ թվում հիմնադրամի կառավարման խորհրդի ձևավորման, որոշումների կայացման, տնօրենի նշանակման և անհրաժեշտ այլ կարգավորումների վերաբերյալ և Առողջապահության նախարարության հետ հետագա քննարկումները իրականացնել նշված առաջարկների շուրջ:

Նիստը նախագահող
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

_____
(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝
ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊՄԵ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ